

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

Арм
2-5458а

„ՄՈՒՐՃ-ՄԱՆԳԱՂ"-Ի ԳՐԱԴԱՐԱՆ № 18

2-5458а

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԾԽԱԽՈՏԱԳՈՐԾ ԿՈԼԽՈԶՆԻԿՆԵՐԻՆ ՅԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆՆԵՐԻՆ

А 7296

ՀՅՈՒՍ. ԿՈՎԿԱՍԻ ՅԵՐԿՐԱՅԻՆ ԾԽԱԽՈՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԸ

Обращение Сев.-Кав. Крайтабаксоюза к табаководам — колхозникам и единоличникам Сев.-Кавказа.

НА АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՅԵՐԿՐԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Հայ գրքի պետական գրադարան
ԵՐԵՎԱՆ

Г.П.Б-ка обяз. экз.
Лнгр. 1930 г.
Акт №

ՌՈՍՏՈՎ Դ-Վ.
1930

22929

Газетно-книжная типография Сев.-Кав. Полиграфтреста. Ростов-н-Д.
Крайлит № 09-128. Заказ № 5463 Тираж 7000×60

Арм.

ԸՆԿԵՐ ԾԽԱԽՈՏԱԳՈՐԾՆԵՐ—ԿՈԼԽՈԶՆԻԿՆԵՐ ՅԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆՆԵՐ,

А 7296

Անցյալ տարվա բերքից ստացված ծխախոտային հումույթի ընդհանուր պակասությունը և միևնույն ժամանակ հումույթի աճող պահանջը, վոր առաջադրում են թե մեր ծխախոտային ծավալվող արդյունաբերությունն և թե եքսպորտը,—կառավարության, ծխախ տի հումույթ արտադրողների և ամբողջ խորհրդային հասարակայնության առաջ իր ամբողջ լայնությամբ դնում են մի խնդիր—անհապաղ կերպով կատարել 1930 թվին տնկված ծխախոտերի առաջին բերքի հանձնումն ու արագացրած մթերումը։

,,Դիպսար''-ի առաջին հավաքը համապատասխան մշակումից հետո, ընթացիկ տարում անհապաղ պետք է հանձնվի ծխախոտագործական կոոպերացիայի ընդունման կայանները, վորտեղից հումույթը վերամշակման համար կհայթայթվի ֆաբրիկաներին։ Հումույթային դժվարությունները, վորոնք ներկայումս ապրում է մեր ծխախոտային արդյունաբերությունը,—յուրաքանչյուր ծխախոտագործական կոլխոզից և

Инв. №

ծխախոտագործ անհատականից պահանջում են վոչ միայն ժամանակին կատարել ծխախոտը ժամկետից առաջ հանձնելու իրենց պարտավորությունները, այլ և ամենաակտիվ ոգնություն ցույց տալ արագացրած մթերումների պլանը կատարելու գործում, վորոնց մասին կառավարությունը, հանձինս Առևժողկոմի, հայտարարել է 1930 թվի հունիսի 3-ին։

ՆՈՐ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱԺԱՄԿԵՏԱՑԻՆ ՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ա. ԴԻՊԱՐԻ ԳՆԵՐՆ ՈՒ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԸ

Առաջ դիպարի իրացումը ձեռնտու չեր։ Վորպես ամենավատ տերևներ ունեցող, դիպարն արդյունաբերության կողմից գնահատվում եր շատ ցածր, այն ժամանակ, յերբ այդ տերևների մշակումը չափազանց բարդ եր։ Ծխախոտագործի աշխատանքը, վորը թափվում եր դիպարի մշակման համար, վերջին հաշվով յերբեք չեր արդարացվում։ Հիմա, պարզեցրած մշակման և արագացրած հանձնման դեպքում, ծխախոտագործի համար դիպարը մեծ արժեք է ներկայացնում։ ԽՍՀՄ Առևժողկոմի 1930 թվի հունիսի 3-ի վորոշմամբ, ժամկետից առաջ հակ կապած և հանձնած դիպարի ծխախոտի համար սահմանված են նոր գներ։ Դիպարը գնահատվում է բրակից բարձր և իր գնով հավասարեցվում է չորրորդ տեսակին, համաձայն նոր գնահատումների։ Նայ...ած թե շրջանների վո՞ր տեղերում է աճում դիպարը, նրա մեկ կիլոգրամը պիտի արժենա —

ՀՍՍՀ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՀ ... ԽՍՀ
Ա. Հայ. Մեշինգա

1) Կուբանում, յենթառայոնական-լեռնային տեղերում 70 կոպեկ, նախալեռնային տեղերում—67 կոպեկ, հարթավայրերում—64 կոպ. և ցածրադիր—61 կոպեկ։

2) Ադիգեյում, յենթառայոնական-հարթավայրային—64 կոպեկ, ցածրադիր—61 կոպեկ։

3) Ղրիմի ռայոնում, 1-ին ռայոններում—67 կոպեկ, 2-րդ—64 կոպեկ, 3-րդ—61 կոպ. և Կրասնոզելյոնի գյուղխորհրդում—70 կոպեկ։

4) Անապայի ռայոնում, Սուդկո և ,,3-րդ ինտերնացիոնալ'' (նախկին Աշխադակ) գյուղերի համար—67 կոպեկ և մնացածների համար—64 կոպեկ։

5) Մայկոպում, 1-ին յենթառայոնում, լեռնային և նախալեռնային—72 կոպ. և յերկրորդ, տափաստանային—64 կոպեկ։

6) Սեվ-ծովյան շրջանում, առաջին ու 2-րդ յենթառայոնում, ծովափում.—

ա) Ջուգբայից մինչև Լազարևկա—70 կոպեկ։

բ) Գելենջիկի վարչական ռայոն (առանց Գելենջիկ քաղաքի և Կաբարդինի, Ադերբինի և Պրասկովկի գյուղխորհրդների)—67 կոպեկ։

գ) Նովորոսիսկի ռայոն, Գելենջիկ քաղաք և Ադերբինի, Կաբարդինի և Պրասկովկի գյուղխորհրդներ—64 կոպեկ։

դ) Ծովափնյա վայրերի 1-ին յենթառայոնում, Լազարևկա գյուղից մինչև Աբխազիայի սահմանը—90 կոպեկ—,,Սամսունի'' համար և 85 կոպեկ—,,Տրապիզոնի'' համար։

Վորպես լրացում այդ գների, սահմանվում է 10 տոկոս հավելում, յեթե կոլխոզը կամ անհատ տնտեսատերը դիպսարի բերքը հանձնեն մինչև 30 թվի սեպտեմբերի 15-ը և 5 տ կոս—յեթե ծխախոտը հանձնված է սեպտեմբերի 15-ից մինչև հոկտեմբերի 1-ը։

Այն ծխախոտների համար, վորոնք կհանձնվեն հոկտեմբերի 1-ից հետո, վճարվում են ըստ սովորականին, նորմալ գներ, վորոնք սահմանված են 1930 թվի բերքի համար։

Ցերկրային Ծխախոտագործական Միությունը հավատացած է և չի կասկածում, վոր կոլխոզնիկներն և անհատականներն ենտուզիազմով ու լարված աշխատանքով, կառավարության տված արտոնություններից անկախ, առավել կարճ ժամանակամիջոցում կկատարեն դիպսարի ծխախոտի մշակումը, անհապաղորեն կհանձնեն պահեստներին և ընդունման կայաններին, վորպեսզի այդ հումույթը տեղափոխվի դեպի ֆաբրիկաները և դրանով նրանց անընդհատ աշխատանքի հնարավորություն տրվի։

Բ. ՄՇԱԿՄԱՆ ՊԱՐԶԵՑՐԱԾ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Ծխախոտի բույսի ստորին տերևները, վորոնք, նայած թե ինչ սերմ է յեղել, լինում են 3-ից մինչև 6 հատ, կոչվում են դիպ, կամ դիպսարի։ Այս տերևները վատ վորակի յեն, վոչ մասսիվ, քիչ զարգացած ջիլերով և մեծ մասամբ աղտոտված են ավազով ու հողակտորներով։ Ծխախոտագործները առաջ դիպսարին կամ բոլորովին չեյին հավաքում, այլ ուղղակի նրանցից մաքրում եյին բույսը, կամ թե նրանց

հավաքելով, թողնում էին մինչև աշունն, ամբողջ բերքի հետ, իսկ հոկտեմբեր ամսից սկսած՝ հավաքած բերքը ըստ թերթիկների վորակի, գույնի և մեծության, յենթարկում էին տեսակավորման, պապուշկայի և հակեր կապելու։ Այդ բոլորի վրա թափվում եր մեծաքանակ աշխատանք, վորը դիպսարիի բերքը չեր արդարացնում։ Նախաժամկետային մթերման դեպքում այդ աշխատանքների կեսը վերանում է։ Տեսակավորումը, տերևների հարթումն ու սրանց պապուշկան ամենևին չեն պահանջվում, չորացնելուց հետո դիպսարիի շարանները թրջվում են և իսկույն հակեր են կապվում։

Դիպսարիի մշակման ամբողջ տեխնիկան, նախաժամկետային մթերման համար, չափազանց հասարակ է և ծանոթ է ծխախոտագործներին, ուստի և նրա մասին առանձնապես կանգ չենք առնի, այլ համառոտակի կնկարագրենք հավաքի, թոկի վրա շարելու, թառամեցման, չորացնելու, թրջելու և հակ կապելու հիմնական մոմենտները։

1) Հավաքին և հետագա՝ թոկին շարելուն յենթարկվում են դիպսարիի հասունացած տերևները։ Սրանց թիվն ամեն մի մեծատերև բույսի վրա լինում է 3-4, իսկ փոքրատերև բույսի վրա—5-6 հատ։ Հասունանալու նշաններն են՝ հավասարաչափ դեղնավուն գունավորումն և ընորոշ լպրծունությունը։ Հավաքն ամենից լավ է կատարել ուշ յերեկոյան, կամ առավոտյան դեմ, յեթե ցող չկա։ Ցողի հետ հավաքած ծխախոտը պահում է մինչև 20 տոկոս ջուր, վորը թառամեցնելիս և չորացնելիս փչացնում է ծխախոտը։

2) Թառամեցումն և չորացումը կատարվում են ըստ սովորականին, կամ արևի տակ, կամ տաքացրած չորանոցներում։ Պրոցեսի ամենակարևոր մասն է՝ լավ թառամեցնել ծխախոտը։ Վատ թառամեցրած ծխախոտը չորացնելուց հետո մնում և կանաչավուն տեսքով։ Վորպեսզի ստանալ հավասարաչափ դեղին գույնի ծխախոտ, պետք է աշխատել, վոր թառամեցնելու ժամանակ կանաչ տերևն աստիճանաբար դեղնավուն գույն ստանա և ապա միայն սկսել վերջնական չորացումը։ Թառամեցում կատարելիս ամբողջ ուշադրությունը պիտի հատկացնել ծխախոտի տերևին և նրա ներքին ջերմության, թույլ չտալ ծխախոտի չափից անց տաքացում, վորովհետև դա կփչացնի նրան։ Ստորին մասերը, մանավորապես դիպասը, իբրև ամենաթույլը տերևի մասիվության տեսակետից, կուտակված դրությամբ ստակավ է յենթարկվում թառամեցման. ամենից լավ է թառամեցում կատարել շրջանակների վրա, թոկերով կապած, նախ նրանց արևի տակ դնելով և ապա սարայը,—մոտիկացրած շարքերով։ Այդ յեղանակով թառամեցրած ծխախոտը վերջնականապես չորացվում է ուղղակի արևի տակ, կամ թե թառամեցումը և չորացումը կատարվում են տաքացրած չորանոցներում։

3) Ծխախոտի թրջելն յեվ հակ կապելը։ Արևի տակ կամ տաքացրած չորանոցներում չորացրած ծխախոտը չափազանց փշրվող է, հեշտությամբ մանրվում է և, վորպեսզի նրան յենթարկել հետագա մշակման, պետք է թրջել նրա տերևներն այնքան, վորպեսզի հակ կապելու ժամանակ չփշրվի ու չկորչի։

Թրջելու ձևերն ընտրելը կախված է յեղանակից

ունտեսության մեջ յեղած այս կամ այն հարմա-
ցություններից։ Հիմնական պահանջն է՝ պրոցեսն անց
կացնել խնամքով և չափից դուրս չխոնավացնել ծխա-
խոտը, քանի որ չափից դուրս թրջված ծխախոտը
փոքրանում է իր վորակը։

Թրջելու ամենապարզ ձևն է՝ բարենպաստ յեղա-
նակի (յերեկոյան կամ առավոտյան առատ ցող) դեպ-
քում ծխախոտի շարանները դուրս տանել շենքերից բաց
երկնքի տակ, արևի մայրամուտից առաջ և ամբողջ
վիշերն այդ դրությամբ թողնել մինչև արևի ծագումը։
Յերկու անգամ կատարված այդպիսի գործողությունն
այնքան է թրջում ծխախոտը, վոր դրանից հետո
դրան հեշտ կարելի յե յենթարկել հակ կապելուն։

Մեր յերկրամասի պայմաններում ամառային ժա-
մանակամիջոցը—հուլիսը, ոգոստոսն ու մինչև անգամ
սեպտեմբերը, սովորաբար աչքի յեն ընկնում չորու-
թյամբ։ Այս պատճառով ծխախոտերը թրջելու և նը-
անց արագորեն հանձնելու համար պետք է դիմել
թրջելու արհեստական յեղանակներին, որինակ,—

ԾԽԱԽՈՏԻ ԹՐՋԵԼԸ ՇԵՆՔԵՐՈՒՄ

Կարելի յե թոկին շարած ծխախոտը դարսել փայտե հա-
տակ ունեցող շենքում, վորը նախապես պետք է լավ
մաքրված լինի. սրսկիչներով (դրա համար միանգա-
մայն ոգտագործ են Վերմորելի և Ավտոմաքսի սրսկիչ-
ները) մաքուր ջուր շաղ տալ ծխախոտի վրա, վորից
հետո նրա բոլոր տերևները ծածկել խսիրով, բրեզեն-
տով կամ ծխախոտի ցողուններից շինած ծածկոցով և
այդ դրությամբ թողնել 24 ժամ։ Դրանից հետո ծխա-

խոտը դառնում է այնքան խոնավ, վոր նրանից հեշտությամբ կարելի յե հակեր կապել։

ԾԽԱԽՈՏԻ ԹՐՋԵԼԸ ՆԿՈՒՂՆԵՐՈՒՄ

Նկուղներ կամ հատուկ շենքեր ունենալու դեպքում ծխախոտը մի վորոշ ժամանակ պահվում է այնտեղ։ Խոնավության շնորհիվ (պատերը և հատակը թրջելու միջոցով կարելի յե ավելացնել խոնավությունը) ծխախոտն ել նամանում է և կարելի յե հակեր կապել։

ԾԽԱԽՈՏԻ ԹՐՋԵԼԸ ԳՈԼՈՐՇԻՈՎ

Ցերրորդ յեղանակը—գոլորշու միջոցով թրջելն ամենից կատարելագործվածն է։ Դրա համար լավ ծածկված շենքում, վորտեղ չպիտի մնա վոչ մի ծակ կամ անցք և վորտեղ դրված են ծխախոտի շարանները, բաց է թողնվում գոլորշի։ Գոլորշի պետք է թողնել այնքան, վոր պատերի վրա ջրի կաթիլներ առաջանան։ Գոլորշի ստանալու համար պիտի ունենալ թիթեղյա կամ յերկաթյա բակ (3-4 դույլանոց), կափարիչով. անցքից պետք է խողովակ անցկացնել շենքը։ Գոլորշին մղվում է 4-5 ժամվա ընթացքում, իսկ շենքում ջերմությունը պիտի լինի 28-30 աստիճան ըստ Ցելսիուսի։ Ցերը ծխախոտը մի փոքր սառչի, նրան պետք է դուրս տանել և հակ կապել։

Դիպսարիի հակ կապելը։ Հակ կապելուց առաջ շարաններն անհրաժեշտ է մաքրել ավազից, հողակտորներից և այլ անպետք բաներից և ապա ուղղակի

ներները թոկերից վերցնելով, դնել հակի արկղը, ոչները վերևից։ Բոլոր հակերին պիտի տալ ստանդարտային չափեր և ձևեր, այսինքն 8 սանտիմետր երկարություն և 53 սանտիմետր բարձրություն։

Այդպիսով պատրաստված հակերն անհապաղ տարում են ծխախոտագործական կոոպերացիայի ընդունման կայանը, վորտեղ, հանձնումից հետո, վերևում նշված գներով տրվում է ծխախոտագործների հաշիվը։

Միահամուռ կերպով, կազմակերպված աշխատանքով արագացնենք և անցկացնենք հավաքման կամպանիան։ Հարվածային տեմպերով և սոցմրցմամբ պատրաստենք ծխախոտի քաղհանը, ուժեղացնենք ուշադրությունը դեպի ծխախոտի պլանտացիաների շինարարությունն ու ռեմոնտը։ Կատարենք արդյունաբերությունն ու եքսպորտը հուժկու թափով ապահովելու մտադիրը։ Հենց դրանով ել ամրապնդենք մեր և մեր ամբողջ ժողովրդական տնտեսությունը։

Ցերկրային Ծխախոտագործական Միություն

A 7296

ՊԵՏԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀՍՍՌ ԳԱ ԳՐԱԴԱՐԱՆ
ՄԱՏԵՆԱՏՈՒՆ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0043199

(032) ԳԻՆԸ 2 ԿՈՊ.

40219

A I 7296